Մրցույթ՝ ՀՀ Սյունիքի մարզի «Տավրուսի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի դասվարի (0,5 դրույք), հայոց լեզվի և գրականության (16,5 դասաժամ), մաթեմատիկայի (12,25 դասաժամ), պատմության (7,875 դասաժամ), աշխարհագրության (3,75 դասաժամ), Ֆիզիկայի (3 դասաժամ), քիմիայի (2,5 դասաժամ), կենսաբանության (3,5 դասաժամ), ինֆորմատիկայի (1,75 դասաժամ), երաժշտության (1,375 դասաժամ), կերպարվեստի (1,375 դասաժամ), տեխնոլոգիայի (2 դասաժամ), ՆԶՊ (0,5 դրույք), Ֆիզկուլտուրա (7,25 դասաժամ), ուսուցիչների թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի:
Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

-դիմում(Ձև 1),

-մեկ լուսանկար 3Х4 չափի:

-բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

-անձը հաստատող փաստաթուղթ,

-<<Հանրակրթության մասին>>ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում)

-ինքնակենսագրություն (Ձև 5),

-այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

-ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,

-հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում)

-որակավորման տարակարգ ունենալու դեպքում հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:
Փաստաթղթերն ընդունվում են սեպտեմբերի 12-ից մինչև սեպտեմբերի 23-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ն բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա **սեպտեմբերի 26-ին, ժամը 14:00-ին** ՀՀ Սյունիքի մարզի Տավրուսի միջնակարգ դպրոցում, հասցեն՝ գ. Տավրուս, փողոց 2 տուն 22:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (093)95-96-26 , (098)18-61-00, (094)76-16-99
հեռախոսահամարներով: